ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2020 թվականի N 260-Ա

Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի N 319-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Մարինե Մարտիրոսյանին*** տրամադրել 2020 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 20 աշխատանքային օր, 2020 թվականի հուլիսի 20-ից մինչև օգոստոսի 14-ը ներառյալ:

2. ***Մարինե Մարտիրոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Սուսաննա Սահակյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ ***Սուսաննա Սահակյանին*** և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Բուժականի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Անուշավան Միքայելյանին*** *(համաձայնությամբ)* ապահովել «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Բուժականի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Անուշավան Միքայելյան (համաձայնությամբ))* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թվականի հուլիսի 15
ք. Հրազդան